ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

2022 թ. օգոստոսի 31-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի առաջին նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022- 2023 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատում:
2. 2022 - 2023 ուս. տարվա դասաբաշխման ծանոթացում:
3. 2022 - 2023 ուս. տարվա ընդունելության քննությունների արդյունքների ամփոփում՝ զեկ. Լ.Գալստյան:
4. Նոր առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկում և հաստատում:
5. Քննարկել անհատական ժամերի հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 2022 - 2023 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատման մասին:

Յուրաքանչյուր տարվա համար կազմվում է աշխատանքային ուսումնական պլան, որն արտացոլում է ամբիոնի մեկ տարվա կատարվելիք աշխատանքները, նիստերը անցկացվում են համաձայն այդ պլանի: Այս տարի ուսումնական պլանում տեղ են գտել հետևյալ կարևոր հարցերը.

- Առարկայական նկարագրերի ծրագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում:
- Վարպետության դասերի կազմակերպմում ոլորտում ճանաչված մասնագետների մասնակցությամբ:
- Ամենամսյա դասալսումների անցակացում:
- Դասախոսների և ուսանողների հաճախման, կարգապահության հարցը:
- Քննական հարցաշարերի և տոմսերի հաստատում:
- Սեսիոն քննությունների նախապատրաստում և ամփոփում:
- Պրակտիկայի կազմակերպում:
- Դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում:

- Պետական քննությունների կազմակերպում և ամփոփում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել ամբիոնի 2022 - 2023 ուս. տարվա աշխատանքային պլանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 2022-2023 ուս. տարվա դասաբաշխման մասին:

1. Գալստյան Լևոն Վազգենի ամբիոնի դոցենտի պ. – 827, 1.00 դր.
2. Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի, դեկանի տեղ. գ/թ, դոցենտ – 407, 0.50 դր.
3. Երզինկյան Աննա Յուրիի, պրոֆեսոր – 351, 0.50 դր.
4. Ավետիքյան Հակոբ Դանիելի, պրոֆեսորի պ. – 722, 1.00 դր.
5. Առաքելյան Արսեն Ռուբենի, գ/թ, դոցենտ - 246, 0.25 դր.
6. Բաղդասարյան Արթուր Վանիկի, գ/թ, դոցենտ - 1037, 1.25 դր.
7. Քոչարյան Կարինե Գրիգորի, դոցենտի պ. - 458, 0.50 դր.
8. Վարդազարյան Գայանե Վլադիմիրի, ասիստենտ - 450, 0.50 դր.
9. Գասպարյան Մովսես Ալբերտի, դասախոս - 478, 0.50 դր.
10. Պողոսյան Գայանե. Ռուբենի, դասախոս - 925, 1.00 դր.
11. Ղուկասյան Անահիտ Հրաչյայի դասախոս - 455, 0.50 դր.
12. Ջիրջյան Էլեն Բենիամինի դասախոս - 474, 0.50 դր.
13. Մարկոսյան Դիանա Հովիկի, գ/թ, դասախոս - 704, 0.75 դր.
14. Նալբանդյան Գնել Վարազդատի դասախոս - 472, 0.50 դր.
15. Աբրահամյան Արամ Լևի գ/թ, դասախոս - 688, 0.75 դր.
16. Խալաթյան Փիրուզա Պետրոսի դասախոս - 421, 0.50 դր.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել ամբիոնի 2022 - 2023 ուս. տարվա ծանրաբեռնավածությունը:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 2022 - 2023 ուս. տարվա ընդունելության քննությունների մասին:

Քննություններին մասնակցել է 13 դիմորդ. որից դրական գնահատական են ստացել 8 դիմորդ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Դպրոցներում հանդիպումներ կազմակերպել բարձր դասարանցիների հետ՝ ներգրավելով բուհի դասախոսներին, հանրապետության ճանաչ-ված լրագրողներին՝ լրագրողի մասնագիտությունը ներկայացնելու և հետաքրքրությունը ավելացնելու նպատակով: Բաց դռների օր կազմա-կերպել դպրոցականների մասնակցությամբ:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ.Վ. Գալստյանի հաղորդումը ամբիոնի անհատական ժամերի կատարման մասին:

Նա նշեց, որ ելնելով լրագրության մասնագիտության առանձնահատկություններից անհատական ժամերը խիստ կարևոր են և անհրաժեշտ: Այդ ժամերը կազմում են յուրաքանչյուր դասախոսի ծանրաբեռնվածության ծավալուն մասը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Դեկանի տեղակալ բ.գ.թ., դոցենտ Ա.Մարտիրոսյանը, որը ընդգծեց անհատական ժամերի կարևորությունը և տեղեկացրեց, որ հետևողա-կան լինեն ուսանողների հաճախումներին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Ավելի լրջորեն մոտենալ անհատական ժամերի կատարմանը և ժամանակին լրացնեն մատյանները:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Գալստյանի հաղորդումը բակալավրիատի և մագիստրատուրայի կուրսերի մասնագիտական նոր առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ամբիոնի դոցենտի պաշտոնակատար, որակի պատասխանատու Կարինե Քոչարյանը.

Քննարկվել են հարցեր մասնագիտական կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումների մասին միտված ՄԿԾ-ներ արդիականացմանը:

Նա նշեց, որ իր կողմից վերանայվել է ամբիոնի դասախոսների ներկայացրած դասընթացների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Առանձին-առանձին քննարկվել են նրանցից յուրաքանչյուրը, հստակեցվել առարկայական ծրագրերի վերջնական կազման համար նախապայման հանդիսացող մասնագրերի, ուսումնական պլանների, առարկայական նկարագրերի ու թեմատիկ տրոհումների կազման քայլերի հաջորդականությունը և դրանցից յուրաքանչյուրը ընդհանրացվել է մեկ միասնական փաթեթում: Այն կոչված է նպաստելու անհրաժեշտ տեխնոլոգիական և մեթոդական հենքի ստեղծմանը՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների հետագա մշակման և ներդրման համար

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել էլեկտրոնային ուսուցման Google Classroom-ի հարթակում տեղադրվող դասընթացների նոր առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

2022 թ. հոկտեմբերի 14-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամենամսյա դասալսումների անցկացում և քննարկում:
2. Բակալավրիատի կուրսային, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում /նախնական/, աշխատանքների ներկայացվող պահանջների չափանիշների սահմանում և հաստատում:
3. Ուսումնական պրակտիկայի կազմակերպումը «Լրագրություն» բաժնի 4-րդ կուրսի և «Լրագրություն» բաժնի 2-րդ կուրսում:
4. Ընթացիկ հարցեր:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 1-ին կիսամյակի ամենամսյա դասալսումների գրաֆիկի ներկայացման՝ անցկացման և քննարկման վերաբերյալ:

N	Դասախոսի ազգանուն, անուն /դասալսող/	Առարկա	Բաժին Կուրս	Ամիս, ամսաթիվ, ժամ	Լսարան
1.	Քոչարյան Կարինե Գրիգորի, դոցենտի պ. /Լ.Գալստյան/	Ընտրովի դաս /Թվային հեռուստառադիոհամակարգեր և համացանց/	Լրագրություն 2-րդ կուրս /մագիստրատուրա/	04.10.2022թ. 3-4 ժամ	203
2.	Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի, բ.գ.թ., դոցենտ /Լ.Գալստյան/	Գրական խմբագրում	Լրագրություն 4-րդ կուրս /բակալավր/	17.11.2022թ. 1-2 ժամ	204
3.	Առաքելյան Արսեն Ռուբենի, ա.գ.թ., դոցենտ /Լ.Գալստյան/	Հեռուստառադիոմոնտաժողի վարպետություն	Լրագրություն 4-րդ կուրս /բակալավր/	30.11.2022թ. 5-6 ժամ	210

Մասնակցեցի հեռուստալրագրության մագիստրանտների ավարտական կուրսի՝ դոցենտի պաշտոնակատար Կարինե Քոչարյանի

դասալսմանը... Օրվա թեման էր «Հեռուստահեռարձակումը և նոր մեդիա տեխնոլոգիաները՝ համացանց»: Դասախոսության նպատակն էր

- հասկանալ ժամանակակից հեռուստատեսության էությունը, առանձնահատկությունները, գործառույթները և զարգացման միտումները ներկայիս թվայնացման դարում;
- Կողմնորոշվելու հեռուստատեսությանը առաջադրված արդիական խնդիրների հորձանուտում՝, ծանոթանալու ծրագրավորման տարրական սկզբունքներին, հեռուստատեսային հեռարձակման քաղաքականության ձևավորման տեխնիկական հիմունքներին, հեռուստակառուցիների հայեցակարգի մշակմանը, հեռարձակման ցանցի ձևավորմանը

Թեորիական մասին հաջորդող աշխույժ բանավոր վերլուծությունները. հեռարձակման օպտիմալ մոդելների առաջարկները թույլ էին տալիս եզրակացնելու, որ Հեռուստատեսության նկատմամբ նման ժամանակակից հայացքի ձևավորումը հնարավորություն է ընձեռում մագիստրատուրայի շրջանավարտներին լինել մրցունակ և պահանջված հեռուստաշուկայում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել դասալսումների գրաֆիկը և արդյունքները համարել բավարար:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը բակալավրիատի կուրսային, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկման և հաստատման /նախնական/, աշխատանքների ներկայացվող պահանջների չափանիշների սահմանման և հաստատման:

Լրագրություն 3-րդ կուրս

Կուրսային աշխատանքների թեմաներ – գրել անունները

1. **Ստեփանյան Շողիկ** - ԶԼՄ ազդեցությունը անհատի ձևավորման և զարգացման գործում:
2. **Մանուկյան Զառա -** Մշակութային հաղորդումները հայկական հեռուստաեթերում:
3. **Տեպիկյան Էսթեր** - Երգիծական հաղորդումները հեռուստաեթերում:
4. **Գևորգյան Մանե** - Հեռուստատեսային ռեպորտաժի առանձնահատկությունները:
5. **Աճեմյան Լիլիթ** - Գովազդի տեղը և դերը ժամանակակից լրատվամիջոցներում:
6. **Աբազյան Ալլա** - Դիմանկարային ակնարկի ժանրը հեռուստաեթերում:

7. **Գրիգորյան Արմիկ** - Թոք-շոուն որպես սինթետիկ ժանր. Թեմատիկ ընդգրկման շրջանակը:
8. **Թամրազյան Նելլի** - Ուղիղ եթերի առանձնահատկությունները:
9. **Բաբալարյան Աննա** - Երաժշտական հաղորդումները հայկական հեռուստաեթերում:
10. **Ստեփանյան Անահիտ** - Ինտերնետ տեխնոլոգիաների դերը ժամանակակից ժուռնալիստիկայում:
11. **Ոսկանյան Վիոլետա** - Հետաքննական լրագրության առանձնահատկությունները:
12. **Թումեյան Սիրանուշ** - Կինոն և հեռուստատեսությունը:
13. **Ուդումյան Մարիաննա** - Լրատվական թողարկումները հայկական հեռուստաընկերություններում:
14. **Ներսիսյան Սուսաննա** - Ճամփորդական ակնարկ. ժանրի ժամանակակից դրսևորումները:
15. **Սարգսյան Լիլիթ -** Երիտասարդների ժամանցը և ժամանցի վայրերը:
16. **Հակոբյան Հասմիկ** - Մշակութային հուշարձանները Հայաստանում:
17. **Սողոմոնյան Միլենա** - Սելեկտիվ աբորտները Հայաստանում.պատճառները և հետևանքները:
18. **Շաղոյան Սերինե -** Սպորտային հաղորդումները հայկական հեռուստատեսությունում:
19. **Խառատյան Սյուզաննա -** Հեռուստաեթերի ժամանցային հաղորդումները:
20. **Թորոսյան Գոհար** - Ծխախոտի վնասակար ազդեցությունը:
21. **Սարգսյան Լուիզա** - Կանանց բռնությունը ընտանիքում:
22. **Ստեփանյան Սերինե -** Զբոսաշրջությունը Հայաստանում:

Լրագրություն, 4-րդ կուրս

Ավարտական աշխատանքի թեմաներ

1. **Կիրակոսյան Սիրուն -** Հայաստանի հանրային հեռուստատեսության օրենսդրական առաքելությունը և առկա եթերային քաղաքականությունը:
2. **Սուքիասյան Էլեն -** Գովազդի մասին օրենքի խախտումները հայկական հեռուստաեթերում:
3. **Մարտիրոսյան Ֆենյա -** Լեզվական վարվելակարգի խախտումները հայկական հեռուստաեթերում:
4. **Արշակյան Սյուզաննա** - ԶԼՄ-ների նկատմամբ վստահության իրական պատկերը հայ հասարակության մեջ (վիճակագրական քննություն):
5. **Գալստյան Էլինա** - Համացանցային հեռուստատեսության զարգացման միտումները Հայաստանում:
6. **Վարդանյան Լուսինե** - Մասնագիտական թերացումները հայկական հեռուստառեպորտաժներում:

7. **Միքայելյան Նոնա** - Համացանցային տեսաֆիլմերը ժանրային ու բովանդակային հայեցակետով:
8. **Աբգարյան Ժենյան -** Ակամա կեղծ տեղեկատվություն և «ֆեյքեր». համեմատական քննություն հայկական ԶԼՄ-ների և համացանցային նյութերի օրինակներով:
9. **Գրիգորյան Լիլիթ –** Հ1-ի եթերային քաղաքականությունը՝ իշխանության և ընդդիմության գործողությունների լուսաբանման դեպքում:
10. **Մաթևոսյան Գոռ -** ¦Ժողովրդական լրագրության» առանձնահատկությունները և զարգացման միտումները Հայաստանի սոցիալական ցանցերում:

Լրագրություն 1-ին կուրս, մագիստրատուրա

1. **Ավետիսյան Հասմիկ Աղասու** - ¦Լրագրողական հետաքննություն.Առկա հիմնախնդիրներն ու զարգացման միտումները§
2. **Մխիթարյան Հասմիկ Սամվելի** - ¦Մամուլի խմբագրականները որպես երկրի հասարակական-քաղաքական իրավիճակի նկարագիր. (2020թ. ¦Առավոտ§, ¦168 ժամ§, ¦Հայկական ժամանակ§, ¦Ազգ§, ¦Հրապարակ§)
3. **Պետրոսյան Գոհար Արթուրի** - ¦Համացանցային հեռուստատեսությունը Հայաստանում§
4. **Օսիպյան Լաուրա Կամոյի** - ¦Հաղորդավարի կերպարը ռադիոյում և հեռուստատեսությունում. համեմատական վերլուծություն§

Լրագրություն 2-րդ կուրս, մագիստրատուրա

1. **Մխիթարյան Քնարիկ** - Հետաքննական լրագրության ժամանակակից առանձնահատ-կությունները:
2. **Սարգսյան Սոնա** - Լրագրողական բազմակողմանիությունը (ունիվերսալիզմը):
3. **Բաղդասարյան Օվսաննա** - Ռազմական լրագրության արդի խնդիրները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - մ. գ.թ., դոցենտ Արթուր Բաղդասարյանը.

Ա. Բաղդասարյանը իր խոսքում նշեց, որ մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության պարագայում առաջնային են դիտարկել ժամանակակից ԶԼՄ-ների հիմնախնդիրներին առնչվող և հետա-զոտական ներուժ պարունակող թեմաները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել բակալավրիատի կուրսային, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը ուսումնական պրակտիկայի կազմակերպումը «Լրագրություն» բաժնի 4-րդ կուրսի և «Լրագրություն» բաժնի 2-րդ կուրսում: Համաձայն ուսումնական պլանի հեռուստառադիոլրագրության բաժնի 4-րդ կուրսերի ուսումնական պրակտիկան սկսվում է հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 16-ը ներառյալ: Պրակտիկան անցենկացնելու RadioFama-ում: Պրակտիկայի ղեկավար է նշանակվել Գ. Նալբանդյանը:

Մագիստրատուրայի լրագրության բաժնի 2-րդ կուրսի մասնագիտական պրակտիկան սկսվում է հոկտեմբերի 20-ից և ավարտվում նոյեմբերի 9-ին: Պրակտիկան անցկացվելու է Առավոտ օրաթերթում: Նախապես գրությամբ դիմել ենք Առավոտ շաբաթաթերթին: Պրակտիկայի ղեկավաներն է նշանակվել՝ ա.գ.թ., Արամ Աբրահամյանը:

Նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել տարբեր լրատվամիջոցների, և մեր ուսանողները կանցկացնեն իրենց ուսումնական պրակտիկան
. Առավոտ օրաթերթում
. Արմենիա հեռուստաընկերությունում
. RadioFama ռադիոյում
Պրակտիկայի ընթացքում ղեկավարները պետք է պարբերաբար հանդիեպեն ուսանողների հետ, լինեն հետևողական:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - մ.գ.թ., դոցենտ Ա.Վ.Բաղդասարյանը, բ.գ.թ., դոցենտ Ա.Ռ. Մարտիրոսյանը, հ.գ.թ., Դ. Մարկոսյանը, դասախոսներ Ա.Հ.Ղուկասյան, Գ. Վ. Նալբանդյանը, Գ. Ռ. Պողոսյանը և ուրիշներ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Պրակտիկայի ընթացքում ղեկավարները պետք է պարբերաբար հանդիեպեն ուսանողների հետ, լինեն հետևողական:

Ընթացիկ հարցեր

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը դասալսումների վերաբերյալ:

Հոկտեմբերի 4-ին ներկա եղա մագիստրատուրա լրագրության բաժնի 2-րդ կուրսի Ընտրովի դաս /Թվային

հեռուստառադիո-համակարգեր և համացանց/ առարկայի դասալսամանը, որը վարում է ամբիոնի դոցենտի պաշտոնակատար Կարինե Քոչարյանը:

Օրվա թեման էր «Հեռուստահեռարձակումը և նոր մեդիա տեխնոլոգիաները՝ համացանց»: Դասախոսության նպատակն էր հասկանալ ժամանակակից հեռուստատեսության էությունը, առանձնահատկությունները, գործառույթները և զարգացման միտումները ներկայիս թվայնացման դարում: Թեորիական մասին հաջորդող աշխույժ բանավոր վերլուծությունները. հեռարձակման օպտիմալ մոդելների առաջարկները թույլ էին տալիս եզրակացնելու, որ Հեռուստատեսության նկատմամբ նման ժամանակակից հայացքի ձևավորումը հնարավորություն է ընձեռում մագիստրատուրայի շրջանավարտներին լինել մրցունակ և պահանջված հեռուստաշուկայում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Արդյունքները համարել բավարար:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

2022 թ. նոյեմբերի 18-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Աշխատանքային և ուսանողական կարգապահության հարցը:
2. Պարբերաբար անցկացնել վարպետության դասեր՝ ոլորտում ճանաչված մասնագետների մասնակցությամբ:
3. Պրակտիկայի ամփոփում:
4. Ընթացիկ հարցեր:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը աշխատանքային և ուսանողական կարգապահության հարցի մասին:

Առանձնահատուկ ուշադրություն դարձնել ուսանողների և դասախոսների կարգապահության հարցին: Դասախոսները պետք է ժամանակին կատարեն իրենց պարտականությունները.

- Աշխատանքային նկարագրերի և ծրագրերի կազմում:
- Հարցաշարերի և քննական տոմսերի կազմում:
- Հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքի մշտական վերահսկում:
- Ամբիոնի նիստերի պարտադիր մասնակցություն:
- Բուհում կազմակերպվող միջոցառումների մասնակցություն:

Պետք է առավելագույնս բացառել անհարգելի բացակայություն-ները և ուշացումները: Նշեմ, որ ուսանողների բացակայությունները կարող են բացասաբար անդրադառնալ վերջնական գնահատականի վրա: Ուսանողներին խստիվ արգելել դասաժամերին բջջայիններից օգտվելը, ֆակուլտետի շենքում ծխելը: Անհրաժեշտ է խնամքով վերաբերվել լսարանում

տեղադրված գույքին, տեխնիկային, մաքուր պահել արվեստանոցները: Անհրաժեշտ է խնամքով վերաբերվել լսարանում և ընթերցասրահում գույքին, տեխնիկային, գրքերին և մաքուր պահել տարածքը:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պարբերաբար անցկացնել վարպետության դասեր՝ ոլորտում ճանաչված մասնագետների մասնակցությամբ:

Ուսանողների համար ոլորտներն ավելի խորը ընկալելու նպատակով նախատեսվում է պարբեբար անցկացնել վարպետության դասեր: Հարկ է դասախոսության հրավիրել ոլորտի հայտնի մասնագետներին, ճանաչված անձանց: Նրանք ներկայացնելու են իրենց մասնագիտական կենսափորձը, իրենց աշխատանքի նրբությունները, խորհուրդ են տալու ուսանողներին, պատասխանել են նրանց հարցերին, անձնական կապեր են հաստատելու ուսանողների հետ և պայմանավովելու են հետագա շփումների մասին: Ուսանողները պետք է ամեն հանդիպումից հետո գրավոր շարադրեն իրենց տպավորությունները, ստացած գիտելիքը և նկատառումները:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պրակտիկայի ամփոփման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի դասախոս Գնել Նալբանդյանը. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության ամբիոնի 4-րդ կուրսի ուսանողներ Ժենյա Աբգարյանը, Սիրուն Կիրակոսյանը, Լիլիթ Գրիգորյանը, Լուսինե Վարդանյանը, Էլինա Գալստյանը, Էլեն Սուքիասյանը, Սյուզի Արշակյանը, Ֆենյա Մարտիրոսյանը, Նոնա Միքայելյանը և Գոռ Մաթոսյանը 2022-ի հոկտեմբերի 20-ից նոյեմբերի 16-ը «Արմենիա» ՀԸ «Ժամը» լրատվական ծրագրում անցել են մասնագիտական պրակտիկա:

Ուսանողները եղել են լրագրողների և խմբագիրների սրահում, մոնտաժային սենյակում, եթերային տաղավարում, ապարատային սենյակում, ձայնագրման սենյակում,

դիմահարդարման և վարսահարդարման սենյակում: Ուսանողները հանգամանալից զրուցել են լրատվականի խմբագրի, լրագրողների, հաղորդավարների, կոորդինատորի, մոնտաժողների, ռեժիսորի, հնչյունային օպերատորի, հուշարարի, դիմահարդարի հետ:

Ուսանողները ծանոթացել են ռեպորտաժի և լրատվության մյուս տեսակների պատրաստման ընթացքին, տեքստի խմբագրման նրբություններին, վերնագրի կանոններին, հաճախ կրկնվող լեզվական սխալներին, ձայնագրման տեխնիկականմ կողմին, ռեպորտաժի մոնտաժին լրագրողի գործուն մասնակցությանը, լրատվական սրահում տիրող աշխատանքային մթնոլորտին, նկարահանումները կոորդինացնելու սկզբունքներին, օրվա լրահոսը կառուցելու ստանդարտներին, օրվա նյութերի հերթագայության տրամաբանությանը, եթերի տաղավարի լուսավորությունը, տեսախցիկների և օպերատորների աշխատանքին, եթերն ապահովող ռեժիսորական և տեխնիկական խմբերի կազմակերպված ու մշակված աշխատանքին, եթերի հանդեպ ամբողջ լրատվական թիմի բացառիկ պատասխանատվությանը, լրագրողի պատասխանատվությանը հեռուստալսարանի առջև, տեղեկությունը ճշտելու, ճշգրտելու, մշակելու, ընկալելի լեզվով շարադրելու և որակյալ տեսանյութով ապահովելու, լրատվությանը վերաբերող օրենքները և էթիկայի նորմերը պահպանելու անհրաժեշտությանը, թիմային աշխատանքի առաջնահերթությունը:

Ուսանողները մասնակցել են նաև ՀՊՄՀ -ի «Ռադիո Ֆամա» ռադիոհանգույցում, ծանոթացել ռադիոհաղորդում-ների տեքստերը գրելու, դրանք կարդալու, մոնտաժելու և հեռարձակելու ընդհանուր դրույթներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա.գ.թ., Արամ Աբրահամյանը.

Մագիստրատուրայի լրագրության բաժնի 2-րդ կուրսի մասնագիտական պրակտիկան սկսվել է հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 9-ին: Ուսանողները հրապարակումներ են պատրաստել կրթա-մշակությանի և սոցիալական թեմաներով, կատարել իրենց

բոլոր առաջադրանքները: Ոմանց նյութերը www.aravot.am–ի ամսվա ամենաընթերցված նյութերի ցանկում են: Ուսանողները անցկացրել են նաև թեմատիկ հետազոտություններ, ոլորտային ուսումնասիրություն-ներ, հետաքրքիր սոցհարցումներ, որոնց հիման վրա էլ պատրաստվել են նրանց հրապարակումները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Արդյունքները համարել բավարար:

Ընթացիկ հարց.

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը Լրագրություն բաժնի 4-րդ կուրսի Գրական խմբագրում առարկայի դասալսաման մասին, որը վարում էր բ.գ.թ. Արտաշես Մարտիրոսյան:

Գրական խմբագրումը ուսանողներին, դասավանդում էր բ.գ.թ. դոցենտ Արտաշես Մարտիրոսյանը: Ուսանողներին ներկայացվեցին գրական, գիտական ինֆորմացիոն և տեխնիկական տեքստերի խմբագրման տարբերությունները, նրբությունները, ավանդույթները: Տեքստի խմբագրման ընթացքում ուշադրության հրավիրվեց հոմանիշների ընտրության հանգամանքին, նախադասությունը ճիշտ կառուցելու կանոններին և խնբագրման ընթացքում օրիգինալ տեքստը չաղճատելու սկզբունքին: Առանձին քննարկվեց խմբագրի անհատական աշխատանքը տեքստի հեղինակի հետ:

Արտաշես Մարտիրոսյանը խնդիրները ներկայացրեց ուսանողի համար հասկանալի, դյուրըմբռնելի և գրավիչ, կարողացավ վեր հանել ոլորտի հիմնական և կարևոր առանձնահատկությունները, սպառիչ պատասխանեց ուսանողներին հարցերին և հստակ հանձնարարություններ տվեց հաջորդ դասախոսությանը պատրաստվելու համար:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Արդյունքները համարել բավարար:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

2022 թ. դեկտեմբերի 1-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 1-ին կիսամյակի սեսիոն քննությունների նախապատրաստում, քննական տոմսերի քննարկում և հաստատում:
2. Տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

/դասալսում/

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 1-ին կիսամյակի սեսիոն քննությունների նախապատրաստում, քննական տոմսերի քննարկման և հաստատման վերաբերյալ:

Քննությունները պարտադիր պետք է անցկացվեն քննական տոմսերով և ընթերակայի ներկայությամբ: Ստուգարքները և քննությունները անց են կացվում դեկանատի կողմից կազմած գրաֆիկին համապատասխան.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել 1-ին կիսամյակի սեսիոն քննությունների քննական հարցաշարերը և տոմսերը:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման վերաբերյալ:

Հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծանրաբեռնվածությունը համապատասխանեցվել է այն իրողության հետ, որ 1-ին կուրսում ընդունելության նախատեսված 41 տեղի համար մրցույթում ընդունվել է 8 ուսանող: Ըստ այդմ, կատարվել են համապատասխան փոփոխությունների դասաբաշխման մեջ: Սակայն բովանդակային առումով հաշվետու տարում ուսումնական բոլոր աշխատանքները կատարվել են ծրագրված ծավալով: Ապահովվել են ուս. պլանով նախատեսված

դասընթացները, թեմաներին առնչվող տեսանկարահանումներն ու մոնտաժային աշխատանքները, մասնագիտական պրակտիկան, դասընթացների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների օգտագործումն ու սպասարկումը: Մասնակիորեն են կատարվել միջազգային կրթական ծրագրերում ամբիոնի ուսանողների ներգրավման համար նախատեսված աշխատանքները. 4-րդ կուրսի ուսանողուհի Ժենյա Աբգարյանը մասնակցել է դեկտեմբերի 1-10-ը HUJ_ը SCI Germany-ի հետ համատեղ կազմակերպվող 10-օրյա «Երիտասարդ լրագրողները հանուն ժողովրդավարության» թրեյնինգ-սեմինարին:

Հաշվետու տարում ուսանողները նախապես ծանոթացել են համալսարանի առցանց հարթակում առկա հաջորդ թեմային, գրականության ցանկին և դասախոսությանը: Լսարանում ինքը՝ ուսանողը, դասախոսի օգնությամբ, բացահայտել է թեմայի էական կողմերն ու հարակից հարցերը: Շարունակվել է կիրառվել դասախոս-ուսանող առցանց հաղորդակցման մեթոդը՝ որպես առաջադրանքների, օժանդակ նյութերի, ծագող հարց ու պատասխանների արդյունավետ հարթակ. ինչը կարևոր չափելի գործիք է ուսուցման ելքային վերջնարդյունքների ճշգրիտ գնահատման համար: Մասնագիտական դասընթացներում նախորդ հաշվետու տարվա համեմատ ավելի մեծ տեղ է հատկացվել թեմայի ներկայացման թիմային ձևաչափով մուլտիմեդիոն գործիքակազմի օգտագործմանը, իսկ օրինակ, ոճաբանության և գրական խմբագրման դասավանդման մեջ լայնորեն կիրառվել է էլեկտրոնային գրատախտակով կամ հեռուստացույցի մոնիտորով աշխատանքի մեթոդը՝ որպես բոլորի համար տեսանելի և ուսանելի տեքստի ուղղման, խմբագրման և վերլուծության արդյունավետ եղանակ: Արդյունքում ուսանողը դարձել է սեփական լրագրողական նյութի և՛ հղացողը, և՛ խմբագիրը: Այս ամենը գործնականում նպաստել է ուսանողակենտրոն ուսուցմանը: Կատարած ընթացիկ առաջադրանքների, գրավոր և բանավոր միջանկյալ ստուգումների և քննական աշխատանքների գնահատմանը դասախոսները մասամբ մասնակից են դարձրել նաև ուսանողներին՝ վստահելով նրանց կողմից սեփական աշխատանքը անաչառ գնահատելու

բարոյական ունակությանը: Արդյունքները ճնշող մեծամասնությամբ գոհացուցիչ են եղել, չնայած երբեմն նկատելի են եղել նաև սուբյեկտիվ ինքնագնահատականներ: Ինչ վերաբերում է հաճախումների բաղադրիչին, դասախոսների սահմանած պահանջները լիովին արտացոլել են տվյալ դասընթացի համար անհրաժեշտ ֆիզիկական ներկայության, որոշ դեպքերում՝ առցանց շփման հանգամանքները: Վերացել են համացանցային նյութերի պատճենման փաստերը, դասախոսներն ընտրել են այնպիսի թեմաներ և այնպես են ձևակերպել կուրսային աշխատանքներն ու գրավոր առաջադրանքների թեմաները, որ բացառվել են կասկածելի աղբյուրներից օգտվելն ու եղած նյութերի մեքենայական կրկնությունները: Ակադեմիական ազնվության ապահովումը հաշվետու տարում շարունակել է լինել ամբիոնի գլխավոր ռազմավարական խնդիրներից մեկը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել ամբիոնի տարեկան հաշվետվությունը:

Ընթացիկ հարց. դասալսում

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը Լրագրություն բաժնի 4-ին կուրսի Հեռուստառադիոմոնտաժողի վարպետություն առարկայի դասալսամ մասին, որը վարում էր ա.գ.թ., դոցենտ Արսեն Առաքելյանը:

Ուսանողներին ներկայացվեցին մոնտաժի սկզբունքները, թեմայի ընտրությունը, ժանրի հստակեցումը, տևողությունը, ուղիղ հեռարձակումը և տեսագրությունը, մոնտաժի նրբությունները, երաժշտական ուղեկցումը և ձայնադրումները: Ուսանողներին ներկայացվեցին նաև ֆորմատների ընտրության սկզբունքները, հեղինակային իրավունքները, իրագործումը, տեխնիկական պահանջների կատարումը, ֆորմատների արդյունավետության գնահատումը:

Արսեն Առաքելյանը հետաքրքիր կերպով ներկացրեց առարկայի կանոնները, օրինաչափությունները, մասնագիտական նրբությունները ներկայացրեց օրինակներով, հիմնավորեց իր անձնական և միջազգային փորձով: Ուսանողներն անկաշկանդ հարցեր տվեցին և ստացան սպառիչ պատասխաններ: Նախանշվեցին հաջորդ դասախոսության հիմնական շեշտադրումները, տվեցին ինքնուրույն աշխատանքի հանձնարարությունները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Դասալսումների արդյունքները համարել բավարար:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

2023 թ. հունվարի 12-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկում և հաստատում:
2. Մ.գ.թ., դոցենտ Արթուր Բաղդասարյանի պրոֆեսորության առաջադրման հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների քննարկում և հաստատում վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի դոցենտի պ., Կարինե Գիրգորի Քոչարյանը.

Նա նշեց, որ իր կողմից վերանայվել է ամբիոնի դասախոսների ներկայացրած դասընթացների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Առանձին-առանձին քննարկվել են նրանցից յուրաքանչյուրը, հստակեցվել առարկայական ծրագրերի վերջնական կազման համար նախապայման հանդիսացող մասնագրերի, ուսումնական պլանների, առարկայական նկարագրերի ու թեմատիկ տրոհումների կազման քայլերի հաջորդականությունը և դրանցից յուրաքանչյուրը ընդհանրացվել է մեկ միասնական փաթեթում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2-րդ կսիամյակի առարկայական նկարագերը և թեմատիկ տրոհումները:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ., Լևոն Գալստյանի հաղորդումը՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արթուր Վանիկի Բաղասարյանի պրոֆեսորի պաշտոնակատարի պաշտոնին ներկայացման մասին: Լ. Գալստյանը հակիրճ ներկայացրեց Ա. Բաղդասարյանի անցած մասնագիտական ուղին, կարևորեց նրա երկարամյա փորձառությունը գործնական լրագրության և մանկավարժության ոլորտներում, հատուկ շեշտեց

վաստակաշատ դասախոսի ավանդը գիտահետազոտական աշխատանքներում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Բ.գ.թ., դոցենտ Արտաշես Մարտիրոսյանը, պրոֆեսոր Հակոբ Ավետիքյանը, հ.գ.թ., Դիանա Մարկոսյանը, դասախոս Գնել Նալբանդյանը: Ա. Մարտիրոսյանը մասնավորապես բարձր գնահատեց Ա. Բաղդասարյանի անցած գիտաստեղծագործական և գիտահետազոտական ուղին, նշեց, որ ծանոթ է նրա բազում հոդվածների ու ձեռնարկների, ուստի կողմ է երաշխավորել Հեռուստառադիոլրագրության ամբիոնում պրոֆեսորի պաշտոնակատարի առաջադրմանը: Դ. Մարկոսյանը մասնավորապես կարևորեց Արթուր Բաղդասարյանի մասնագիտական որակներն ու շարունակական գիտական պրպտումները, ինչպես նաև նրա մարդկային որակներն ու մանկավարժական ձիրքը: Դրական բնութագրեր տվեցին նաև Հ. Ավետիքյանն ու Գ. Նալբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Միջնորդել Կուլտուրայի ֆակուլտետի խորհրդին՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արթուր Վանիկի Բաղդասարյանին Հեռուստառադիոլրագրության ամբիոնում պրոֆեսորի պաշտոնակատարի պաշտոնին առաջադրելու համար:

Ընթացիկ հարցեր

Լ Ս Ե Ց Ի Ն -Ամբիոնի վարիչ, դոցենտի պ., Լևոն Գալստյանի հաղորդումը ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար Հակոբ Ավետիքյանին ֆակուլտետի խորհրդում ընդգրկելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ, դոցենտի պ., Լևոն Գալստյանը նշեց, որ Հակոբ Ավետիքյանը արդյունավետ և բովանդակալի կդարձնի խորհրդի աշխատանքը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Առաջադրել պրոֆեսորի պաշտոնակատար Հակոբ Ավետիքյանին ֆակուլտետի խորհրդում:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի Լ. Վ. Գալստյան

վարիչ, դոցենտի պ.՝

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

2023 թ. փետրվարի 8-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 1-ին կիսամյակի սեսիոն քննությունների ամփոփում:
2. Ուսումնական պրակտիկայի կազմակերպումը «Լրագրություն» բաժնի 3-րդ կուրսում:
3. Ընթացիկ հարցեր:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 1-ին կիսամյակի սեսիոն քննությունների ամփոփման վերաբերյալ:

Դեկտեմբեր ամսից սկսած ամբիոնը բացի անհատական պարապմունքներից կազմակերպում և անցկացնում է արտալսարանային ժամեր: Այդ ժամերի հաշվին դասախոսները կոնսուլտացիաներ են անցկացնում մասնագիտական առարկաներից, հարցերի պարզաբանման և քննարկման շուրջ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Զմեռային ստուգարքների և քննությունների արդյունքները համարել բավարար:

Լ Ս Ե Ց Ի Ն -Ամբիոնի վարիչ, դոցենտի պ., Լևոն Գալստյանի հաղորդումը՝ «Լրագրություն» բաժնի 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի կազմակերպման մասին::

Համաձայն ուսումնական պլանի հեռուստառադիոլրագրության բաժնի 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկան սկսվում է փետրվարի 8-ից մինչև մարտի 8-ը ներառյալ: Պրակտիկան անցենկացնելու են՝ Հանրային Ռադիոյում

և ՀՊՄՀ -ի RadioFama-ում: Պրակտիկայի ղեկավար է նշանակվել Գ. Պողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Պրակտիկայի ընթացքում պետք է պարբերաբար հանդիպել ուսանողների հետ և հետևողական լինել նրանց հաճախումներին:

Ընթացիկ հարցեր

1.

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը առկա բակալավրի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերում (ՄԿԾ) վերջնարդյունքների փոփոխության վերաբերյալ:

Ամբիոնի վարիչ Լ.Գալստյանը ներկայացրեց ՄԿԾ-ներում կատարված փոփոխությունները, որոնք համապատասխանեցվել են բուհի ընդհանուր ռազմավարական ծրագրին և առաջարկվող նոր չափանիշներին, ինչպես նաև՝ մշակել են ժամանակակից հասարակական և տեղեկատվական զարգացումների համահունչ դասավանդման մեխանիզմներ, որոնք էապես կբարձրացնեն կրթության որակը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Բ.գ.թ., դոցենտ Ա.Ռ.Մարտիրոսյանը, մ.գ.թ., դոցենտ Ա.Վ.Բաղդասարյանը, հ.գ.թ. Դ.Հ.Մարկոսյանը, դոցենտի պ., Կ.Գ.Քոչարյանը, դասախոս Գ.Վ. Նալբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն ՄԿԾ-ների փոփոխությունները և ներկայացնել ֆակուլտետի խորհրդի հաստատմանը:

2.

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 2-րդ կիսամյակի ամենամյա դասալսումների գրաֆիկի վերաբերյալ:

N	Դասախոսի ազգանուն,անուն	Առարկա	Բաժին Կուրս	Ամիս, ամսաթիվ, ժամ	Լսարան
1.	Ղուկասյան Անահիտ Հրաչյայի /Լ. Գալստյան/	Հեռուստառադիոսցենար	Լրագրություն 4-րդ կուրս /բակալավր/	21.02.2023 թ. 5-6 ժամ	203
2.	Պողոսյան Գայանե	Խոսքի վարպետություն	Լրագրություն	16.03.2023թ.	208

	Ռուբենի /Լ.Գալստյան/		3-րդ կուրս /բակալավր/	5-6 ժամ	
3.	Ավետիքյան Հակոբ Դանիելի պրոֆեսորի պ. /Ա.Բաղդասարյան/	Լրագրության հիմունքներ	Լրագրություն 1-ին կուրս /բակալավր/	25.04.2023թ. 5-6 ժամ	204
4.	Մարկոսյան Դիանա Հովիկի, հ.գ.թ., /Լ, Գալստյան/	Հեռուստառադիոլրագրող ի վարպետություն	Լրագրություն 3-րդ կուրս /բակալավր/	17.05.2023թ. 3-4 ժամ	208

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել 2-րդ կիսամյակի դասալսումների գրաֆիկը:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

2023 թ. մարտի 17-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

4. Պրակտիկայի ամփոփում:
5. Բակալավրատի կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում:
6. Մասնագիտական պրակտիկայի կազմակերպում «Լրագրություն» բաժնի 1-ին կուրսում:
7. Ընթացիկ հարցեր:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը «Լրագրություն» բաժնի 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի ամփոփման վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ուսումնական պրակտիկայի ղեկավար՝ դասախոս Գայանե Պողոսյանը.

2023թվականի փետրվարի 9-ից մարտի 8-ը ներառյալ (4 շաբաթ) ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառադիոլրագրության ամբիոնի 3-րդ կուրսի 22 ուսանողները իրենց ուսումնական պրակտիկան անցկացրել են Ռադիոֆամայում և Հանրային ռադիոյում:

Պրակտիկան կազմակերպվել էր ուսումնաճանաչողական նպատակով և գլխավոր խնդիրն էր ծանոթացնել ուսանողներին մասնագիտական ոլորտի գործունեության պայմաններին, զարգացնել անհատական աշխատանք կատ արելու և դեպքերի ուսումնասիրության հմտություններն ու գործնական կիրառության կարողությունները: Աշխատանքն իրականացվել է բարձր մակարդակով, բանիմաց մասնագետների ղեկավարությամբ, ուսանողներից շատերը պրոֆեսիոնալ լրատվամիջոցներում արել են առաջին ինքնուրույն քայլերը, մի մասն էլ հարստացրել ու ամրապնդել է արդեն ձեռք բերված գործնական գիտելիքները:

Հայաստանի Հանրային ռադիոյում ուսումնական պրակտիկա են անցել՝

1. Աճեմյան Լիլիթ Կարենի

2. Բաբալարյան Աննա Արմենի
3. Գրիգորյան Արմիկ Զոհրաբի
4. Գևորգյան Մանե Անդրանիկի
5. Թորոսյան Գոհար Սայաթի
6. Թումեյան Սիրանուշ Խաչիկի
7. Խառատյան Սյուզաննա Վարուժանի
8. Հակոբյան Հասմիկ Երվանդի
9. Մանուկյան Զառա Զավենի
10. Ներսեսյան Սուսաննա Վաչագանի
11. Շաղոյան Սերինե Քաջիկի
12. Սողոմոնյան Միլենա Ռոբերտի
13. Սարգսյան Լուիզա Հովհաննեսի
14. Սարգսյան Լիլիթ Գևորգի
15. Ոսկանյան Վիոլետա Գևորգի
16. Տեպիկյան Էսթեր Մինասի

Հանրային Ռադիոյում աշխատանքը կազմակերպվել և իրականացվել է լրատվական, հասարակական քաղաքական, «Իմ ռադիո», «Արևիկ» ծրագրերում և մոնտաժային բաժնում՝ Լուսինե Վասիլյանի, Արմեն Վարդանյանի, Անի Մինասյանի, Անահիտ Բեկյանի, Կարինե Գևորգյանի և Ռուզաննա Գրիգորյանի ղեկավարությամբ:

Հանրային ռադիոյում 15 ուսանողներ ամենօրյա ռեժիմով կանոնավոր մասնակցել են աշխատանքներին: Զառա Մանուկյանը ընդհանապես չի մասնակցել պրակտիկային:

Բոլորի մասնակիցների մասնակցությունը և կատարված աշխատանքը գնահատվել է գերազանց:

ՀՊՄՀ «Ռադիո Ֆամա»-ում ուսումնական պրակտիկա են անցել՝

1. Աբազյան Ալլա Արմենի
2. Թամրազյան Նելլի Էռնեստի
3. Ստեփանյան Անահիտ Մակիչի
4. Ստեփանյան Շողեր Արմենի
5. Ստեփանյան Սերինե Ներսիկի
6. Ուդումյան Մարիաննա Արտյոմի

Բոլոր ուսանողները ակտիվ մասնակցություն են ունեցել հաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքներին:

Ե՛վ լրատվամիջոցների ներկայացուցիչների, և՛ ուսանողների գնահատմամբ պրակտիկան անցել է արդյունավետ, հագեցած, ուսանողները կարողացել են ձեռք բերել որոշակի հմտություններ և կարողություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ –Ուսումնական պրակտիկայի արդյունքները համարել բավարար:

Լ Ս Ե Ց Ի Ն -Ամբիոնի վարիչ, դոցենտի պ., Լևոն Գալստյանի հաղորդումը՝ բակալավրատի կուրսային, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկման և հաստատման վերաբերյալ:

Կուրսային թեմաներ

1. Բաբալարյան Աննա – Սերիալը եթերում:
2. Սարգսյան Լիլիթ – Երաժշտական երգերը հեռուստատեսությունում:
3. Թորոսյան Գոհար – Ազգային ավանդույթներ:
4. Թամրազյան Նելլի – Ուղիղ եթերի առանձնահատկությունները:
5. Աբազյան Ալլա – Սնահավատություն:
6. Աճեմյան Լիլիթ – 33 գրքեր և ընթերցանություն:
7. Շաղոյան Սերինե – Սպորտային հաղորդումներ:
8. Տեպիկյան Էսթեր – Ճամփորդական ակնարկ:
9. ՈՒդումյան Մարիաննա – ԶԼՄ ազդեցությունը անհատի զարգացման գործում:
10. Սողոմոնյան Միլենա – Համակարգչային կախվածություն:
11. Թումեյան Սիրանուշ – Գովազդի դերը և տեղը ժամանակակից լրագրության մեջ:
12. ՍարգսյանՎիկտորյա – Հեռուստառեպորտաժի առանձնահատկությունները:
13. Ներսեսյան Սուսանա – Լուսանկարչություն և ֆոտոլրագրություն:
14. Խառատյան Սյուզաննա – Ամուսնալուծություններ:
15. Գևորգյան Մանե - Հնարավոր է զինծառայությունը կանանց համար:
16. Ոսկանյան Վիոլետա – Հետաքննական լրագրության առանձնահատկությունները:
17. Սարգսյան Լուիզա – Լրագրողի էթիկա:
18. Գրիգորյան Արմիկ – Զբոսաշրջության զարգացումը Հայաստանում:
19. Ստեփանյան Շողեր – Գործազրկություն:
20. Հակոբյան Հասմիկ - Սեռով պայմանավորված արհեստական վիժեցումների խնդիրը:
21. Ստեփանհան Սերինե – Պլաստիկ վիրահատությունները Հայաստանում:
22. Ստեփանյան Անահիտ – Մանկական հաղորդումները հեռուստատեսությամբ:

Լրագրություն 4-րդ կուրս

Ավարտական աշխատանքների թեմաներ

1. **Աբգարյան Ժենյա Վահանի**
Ակամա կեղծ տեղեկատվություն և «ֆեյքեր». համեմատական քննություն հայկական ԶԼՄ-ների և համացանցային նյութերի օրինակներով:
2. **Արշակյան Սյուզաննա Անդրանիկի**
ԶԼՄ-ների նկատմամբ վստահության իրական պատկերը հայ հասարակության մեջ (վիճակագրական քննություն):
3. **Գալստյան Էլինա Արտակի**
Համացանցային հեռուստատեսության զարգացման միտումները Հայաստանում:
4. **Գրիգորյան Լիլիթ Արայիկի**
Հ1-ի եթերային քաղաքականությունը՝ իշխանության և ընդդիմության գործողությունների լուսաբանման դեպքում:
5. **Կիրակոսյան Սիրուն Վրույրի**
«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պրոբլեմատիկ փոփոխությունները:
6. **Մաթևոսյան Գոռ Արմենի**
¦Ժողովրդական լրագրության» առանձնահատկությունները և զարգացման միտումները Հայաստանի սոցիալական ցանցերում:
7. **Մարտիրոսյան Ֆենյա Արմենի**
Լեզվական վարվելակարգի խախտումները հայկական հեռուստաեթերում:
8. **Միքայելյան Նոնա Հրաչի**
Սոցիալական տեսանյութերը համացնցում:
9. **Սուքիասյան Էլեն Գագիկի**
«Գովազդի մասին» ՀՀ օրենքի խախտումները հայկական հեռուստաեթերում:
10. **Վարդանյան Լուսինե Վարդանի**
Մասնագիտական թերացումները հայկական հեռուստառեպորտաժներում:

Լրագրություն 2-րդ կուրս

Մագիստրոսական թեզեր

4. **Մխիթարյան Քնարիկ Արտյոմի** - «Հետաքննական լրագրության ժամանակակից առանձնահատկությունները»:
5. **Սարգսյան Սոնա Արայի** - Լրագրողական բազմակողմանիությունը (ունիվերսալիզմը):
6. **Բաղդասարյան Օվսաննա Վահագնի** - Լրագրության արդի հիմնախնդիրները արտակարգ իրավիճակների լուսաբանման ոլորտում:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը «Լրագրություն» բաժնի 1-ին կուրսի մասնագիտական պրակտիկայի կազմակերպման վերաբերյալ:

Մագիստրատուրայի լրագրության բաժնի 1-ին կուրսի մասնագիտական պրակտիկան սկսվում է մարտի 30-ից և ավարտվում ապրիլի 20-ը: Պրակտիկան անցկացվելու է ՀՊՄՀ Ռադիոֆամայում: Պրակտիկայի ղեկավաներն է նշանակվել՝ մ.գ.թ., դոցենտ Արթուր Բաղդասարյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Պրակտիկայի ընթացքում ղեկավարը պետք է պարբերաբար հանդիեպեն ուսանողների հետ, լինի հետևողական:

Ընթացիկ հարցեր
Դասալսում

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը դասալսումների մասին:

2023թ.փետրվարի 21-ին 4-րդ կուրսում ներկա եղա «Հեռուստառադիոսցենար» առարկայի դասին: Այն վարում էր լրագրության ամբիոնի դասախոս Անահիտ Ղուկասյանը: Քննարկվող թեման էր՝ Ինքնագովազդի (փրոմոուշնի) սցենարի առանձնահատկությունները: Դասը սկսվեց «Առաջին ալիքի դեմքերը պատրաստվում են թռիչքի դեպի նոր եթերաշրջան» իմիջային գովազդի և Shant Digital Tv-ի ինքնագովազդի , որտեղ նորարության մասին խոսում էր հենց հեռուստադիտողը, հոլովակների դիտումով, որից հետո ուսանողները (նախապես ծանոթ լինելով դասընթացի էջում տեղադրված նյութին) վերլուծեցին տեսահոլովակները և հայտնեցին իրենց կարծիքները: Դասախոսը մեկնաբանեց հեռուստատեսությունում ու ռադիոյում ինքնագովազդի սցենարի, փրոմոուշնի և լսարանի կապի ու հետազոտության կարևորությունը: Ներկայացրեց CNN, TNT, TBS, NBC, CBS: FOX,Cartoon Network և այլ հեռուստացանցերի փրոմոուշնների ազդեցությունը լսարանի վրա՝ հիմնավորելով մարքեթինգի տեսության մեջ աքսիոմա դարձած «Ով առաջինն է հանդես գալիս նոր գաղափարով, նա էլ դառնում է դրա սեփականատերը» տեսակետով և հեռուստամագնատ Թեդ Թըրների «Առաջնորդվիր, հետևիր կամ մի կողմ քաշվիր» փիլիսոփական մոտեցմամբ: Ա.Ղուկասյանը ներկայացրեց ստեղծագործական մտահաղացման իրագործման պահանջները՝մանրամասն բացատրելով

յուրաքանչյուրի դերակատարումը փրոմոուշնի կառուցման գործում. սցենարի մշակում, ելակետային սկզբունքներ, սցենարական հնարքներ , տեսաշարի ու ձայնաշարի համապատասխանություն և հոլովակի պատրաստման կանոններ: Ուսանողները, դասախոսի առաջարկությամբ, քննարկեցին փրոմոուշնի սցենարի պահանջները և ներկայացրին իրենց տարբերակները: Լսարանային հաջորդ առաջադրանքի ընթացքում ուսումնասիրեցին և վերլուծեցին իրենց տրամադրված ռադիո և հեռուստատեսային ինքնագովազդի սցենարները, նշեցին առանձնահատ-կությունները, կազմեցին սցենարական պլաններ, որոնց շուրջ ծավալվեց բանավեճ: Որպես գնահատվող առաջադրանք՝ հանձնարարվեց կազմել ռադիո և հեռուստատեսային ինքնագովազդի սցենարներ և պատրաստել 30 վրկ. հոլովակներ: Տեխնիկական միջոցների օգտագործումը հնարավորություն տվեց դասի թեման դարձնել առավել ընկալելի և հետաքրքիր: Դասը հագեցած էր, ակտիվ և դինամիկ: Կարծում եմ՝ այն կարելի է համարել հաջողված:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դասալսումների արդյունքները բավարար:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

2023 թ. ապրիլի 28-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Պետական քննությունների նախապատրաստական աշխատանքների կազմակերպում:

2. Պրակտիկայի ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պետական քննությունների նախապատրաստական աշխատանքների և կազմակերպման վերաբերյալ:

Բակալավրիատի ավարտական աշխատանքերի պաշտպանությունը տեղի ունեցավ ս.թ. ապրիլի 7-ին: Հանձնաժողովի կազմում էին ամբիոնի վարիչ Լ. Գալստյանը, ավարտական աշխատանքների ղեկավարներ դոցենտ Ա. Մարտիրոսյանը, դասախոս Գ.Նալբանդյանը

Մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը տեղի ունեցավ ս.թ. ապրիլի 13-ին: Հանձնաժողովի կազմում էին ամբիոնի վարիչ Լ. Գալստյանը, մագիստրոսական թեզերի ղեկավար ա.գ.թ., Ա. Աբրահամյանը:

Ավարտական կուրսերի ուսանողները ներկայացրեցին սեղմագրերը: Աշխատանքներում առկա էին մի շարք թերություններ: Ոմանք հստակ չէին ներկայացրել վարկածը, հիմնադրույթները, եզրահանգումները, տերմինները: Թերի էր ներկայացված գրականության ցանկը, չկային անհրաժեշտ հղումները: Աշխատանքները բավականաչափ հղկված չէին: Առկա էին բազմաթիվ ուղղագրական, կետադրական սխալներ և վրիպակներ: Ծանոթանալով սեղմագրերին և լսելով ուսանողներին, հանձնաժողովը անդրադարձավ յուրաքանչյուր աշխատանքին, մատնանշելով թերությունները և թերացումները, առաջարկեց մինչև պաշտպանությունը ընկած ժամանակահատվածում շտկել և խմբագրել աշխատանքները՝ հաշվի առնելով արված դիտողությունները և առաջար-կությունները: Պաշտպանության թույլտվություն ստացան բոլոր ուսանողները:

Ըստ ձևաչափի մագիստրոսական թեզերը մինչև պաշտպանությունը առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ներկայացվեն արտաքին գրախոսության:

ՈՐՈՇԵՑԻՆ– Թույլատրել պաշտպանության ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը: Մագիստրոսական թեզերի ընդդիմախոս հաստատել բ.գ.թ., դոցենտ Շուշանիկ Դոյդոյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը «Լրագրություն» բաժնի 1-ին կուրսի մասնագիտական պրակտիկայի ամփոփման վերաբերյալ:

Մագիստրատուրայի լրագրության բաժնի 1-ին կուրսի մասնագիտական պրակտիկան ուսանողները անց են կացրել ՀՊՄՀ Ռադիոֆամայում մարտի 30-ից մինչև ապրիլի 20-ը: Պրակտիկայի ղեկավաներն է՝ մ.գ.թ., դոցենտ Արթուր Բաղդասարյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – մ.գ.թ., դոցենտ Արթուր Բաղդասարյանը.

Մագիստրատուրայի լրագրության բաժնի 1-ին կուրսի մասնագիտական պրակտիկան սկսվել է մարտի 30-ից մինչև ապրիլի 20-ը: Ուսանողները պատրաստել մշակությաին, սոցիալական թեմաներով ռադիոհաղորդումներ, կատարել հանձնարարված իրենց բոլոր առաջադրանքները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Արդյունքները համարել բավարար:

Ընթացիկ հարցեր

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը դասալսումների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – մ.գ.թ., դոցենտ Արթուր Բաղդասարյանը.

Ապրիլի 25-ին ներկա եղա պրոֆեսոր Հակոբ Ավետիքյանի «Լրագրության հիմունքներ» առարկայի դասալսմանը:

Դասընթացի թեման գովազդն էր, դրա տեսակները և ազդեցությունը հասարակության տարբեր շերտերի վրա: Դասախոսը ներկայացրեց գովազդի ձևավորման խնդիրները պատմական տարբեր ժամանակաշրջաններում, ներկայացրեց տվյալ գործառույթների դրսևորումները նույնիսկ այն մարդկության զարգացման ժամանակահատվածներում, երբ գովազդ հասկացությունը դեռևս ձևավորված չէր: Անդրադարձ կատարվեց մամուլում, էլեկտրոնային լրատվամիջոցներում և համացանցում գովազդի ներկայացման

խնդիրներին: Ներկայացվեց առևտրային/կոմերցիոն և սոցիալական գովազդների տարբերությունները ու դրանց ազդեցությունը թիրախային լսարանի վրա: Ինտերակտիվ զրույցի ձևաչափով ներկայացվել են ժամանակակից հեռուստաընկերությունների եթերում առկա գովազդների գեղարվեստական խնդիրները, ինչպես նաև գովազդների կերպարային լուծումները, հանրաճանաչ մադկանց մասնակցության նպատակները և անիմացիոն գովազդների թիրախային լսարանը: Ներկայացվել է նաև հեռուստատեսային և ռադիո գովազդի ընդհանրությունները և առանձնահատկությունները: Գործնականում վերլուծվել է տրանսնացիոնալ կազմակերպությունների ապրանքատեսակների և տեղական ապրանքանիշ ներկայացնող արտադրանքների գովազդային լուծումները: Քննարկվել է գույնի կարևորությունը գովազդում: Հանձնարարվեց կարդալ նաև Գովազդի մասին ՀՀ օրենքը և առանձնացնել այն հիմնական պահանջները, որոնք վերաբերում են գովազդի բովանդակությանն ու հեռարձակմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դասալսման արդյունքները բավարար:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

2023 թ. մայիսի 31-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

8. Պետական քննությունների արդյունքների ամփոփում:
9. Դասախոսների և ուսանողների մասնակցությունը գիտաժողովներին:
10. 2-րդ կիսամյակի սեսիոն քննական հարցաշարերի և տոմսերի քննարկում և հաստատում, զեկ. ամբիոնի վարիչ՝ դոցենտ Լ. Գալստյան:
11. Ընթացիկ հարցեր:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պետական քննությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ:

2023թ. մայիսի 29-ին Լրագրություն մասնագիտության լրագրության բակալավրի մասնագիտացման խմբի 2022-2023 ուստարվա ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել է 10 շրջանավարտ:

Քննության բնականոն ընթացքի համար ստեղծված էին անհրաժեշտ աշխատանքային պայմաններ, լսարանը հագեցած էր պահանջվող տեխնիկական սարքավորումներով: Քննական հանձնաժողովն աշխատեց փոխադարձ հարգանքի, կոլեգիալ լիարժեք ըմբռնման, հանգիստ մթնոլորտում՝ հնարավորություն ունենալով համարժեքորեն գնահատելու ուսանողների գիտելիքներն ու հմտությունները: Ամփոփիչ ատեստավորման աշխատանքները բոլորը գրված էին պատշաճ մակարդակով, սահմանված չափորոշիչներին համապատասխան, առանձին դեպքերում՝ բարձր մակարդակով:

Ուժեղ կողմերն են՝

- Ուսանողները լավ էին տիրապետում նյութին:
- Կարողանում էին հակիրճ և ամփոփ ներկայացնել իրենց կատարած ուսումնասիրության արդյունքները:
- Գրավոր աշխատանքից և բանավոր խոսքից զատ քննական հանձնաժողովը ուսանողների ստացած մասնագիտական գիտելիքների մասին կարծիք էր կազմում նաև ներկայացվող տեսանյութերով:

- Ուշագրավ էին Միքայելյան Նոնայի, Արշակյան Սյուզաննայի, Գալստյան Էլինայի և Սուքիասյան Էլենի արտական աշխատանքները:
- Հատուկ գնահատանքի էր արժանի Աբգարյան Ժենյայի ավարտական աշխատանքը:
- Ուսանողներն օգտվել էին մասնագիտական գրականությունից, կատարել համապատասխան հղումներ:

Թույլ կողմներն են՝

- Որոշ ուսանողներ երբեմն դժվարանում էին համարժեքորեն արձագանքել հանձնաժողովի՝ թեմային առնչվող հարակից հարցերին:
- Նաև ոչ միշտ էր օգտագործված գրականության համապատասխան հղումն ուղղակիորեն վերաբերում քննարկվող հարցին:

2023թ. մայիսի 29-ին մագիստրոսական թեզի պաշտպանությանը մասնակցել են 3 շրջանավարտներ: Ամփոփիչ ատեստավորման աշխատանքները գրված էին պատշաճ մակարդակով, սահմանված չափորոշիչներին համապատասխան, հիմնականում՝ բարձր մակարդակով:

Մագիստրոսական թեզերի պատրաստելիս հարկ է ավելի ավելի մեծ տեղ հատկացնել ԶԼՄ հրապարակումների համեմատական վերլուծությանը և քոնթենթ անալիզին, ինչպես նաև համապատասխան մեդիա փորձագետների հետ համապարփակ հարցազրույցներին, որոնք կարող են օգտագործվել թե որպես հավելվածի, թե բուն աշխատանքում:

Պաշտպանված թեզերը կարելի է թվայնացնել և ուղարկել համապատասխան շահագրգիռ գերատեսչություններ և հիմնարկներ՝ որպես օգտակար օժանդակ գրականություն:

Ուժեղ կողմերն են՝

- Բաղդասարյան Օվսաննայի, Մխիթարյան Քնարիկի և Սարգսյան Սոնայի մագիստրոսական թեզերը գրված էին բարձր մակարդակով: Ուսանողներն ի ցույց էին դրել գիտական աշխատանք կատարելու բարձր հմտություններ:
- Կարողացել էին օգտվել մասնագիտական գրականությունից՝ կատարելով հղումներ, արել էին գրագետ եզրահանգումներ և առաջարկություններ:
- Կատարված աշխատանքի մասին պատկերացումն ամբողջական էր դառնում բանավոր պատասխանին կից ցուցադրվող սլայդերի շնորհիվ:

- Մագիստրոսական թեզը լիովին համապատասխանում էր սահմանված չափորոշիչներին։
- Ուսանողները դրսևորեցին հետազոտական, վերլուծական, ստեղծագործական աշխատանք կատարելու հմտություններ։

Թույլ կողմերն են՝

- Երբեմն դրսևորվում էր թեմային առնչվող որոշ հարակից օրենսդրական հիմքերին ոչ բավարար իրազեկվածություն։

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Ամփոփիչ ատեստավորման արդյունքները գնահատել բավարար։

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը դասախոսների և ուսանողների մասնակցությունը գիտաժողովների վերաբերյալ։

Դեկտեմբերի 1-10-ը HUJ_ը SCI Germany -ի հետ համատեղ կազմակերպվող 10-օրյա թրեյնինգ-սեմինարին «Երիտասարդ լրագրողները հանուն ժողովրդավարության», մասնակցություն են ունել ամբիոնի վարիչ Լևոն Գալստյան, պրոֆեսորի պ., Հակոբ Ավետիքյանը և Լրագրություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Ժենյա Աբգարյանը։

Դասախոսներից ա.գ.թ., դոցենտ Արսեն Առաքելյանը ունեցել է մի շարք գործուղումներ՝ Ռուսաստանի Դաշնություն, Բելառուսիա, Բանգլադեշ, որտեղ ներկայացել է որպես ժյուրիի անդամ կամ ներկայացրել է իր ֆիլմերը։

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Արդյունքները համարել բավարար։

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը 2-րդ կիսամյակի սեսիոն քննական հարցաշարերի և տոմսերի քննարկման և հաստատման վերաբերյալ։

Քննությունները պարտադիր պետք է անցկացվեն քննական տոմսերով: Ստուգարքները և քննությունները անց են կացվում դեկանատի կողմից կազմած գրաֆիկին համապատասխան.

Քննության գրաֆիկ

Լրագրություն 1-ին կուրս, բակալավր

1. Լրագրության հիմունքներ – Հ.Ավետիքյան - 16.06.2023 թ.
2. Հեռուստառադիոտեխնիկայի հիմունքներ - Կ. Քոչարյան - 23.06.2023 թ.

Լրագրություն 2-րդ կուրս, բակալավր

1.Հեռուստառադիոլրագրության տեսություն և մեթոդաբանություն – Ա. Բաղդասարյան - 08.06.2023 թ.

Լրագրություն 3-րդ կուրս, բակալավր

1. Հեռուստառադիոլրագրության տեսություն և մեթոդաբանություն – Մարկոսյան Դ. - 09.06.2023 թ.
2. Ոճաբանություն և գրական խմբագրում – Գալստյան Լ. – 20.06.2023 թ.
3. Խոսքի վարպետություն – Պողոսյան Գ. – 23.06.2023 թ.

Լրագրություն 1-ին կուրս, մագիստրատուրա

1. Հանրային կապեր - Ա.Բաղդասարյան – 15.06.2023 թ.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Հաստատել 2-րդ կիսամյակի քննական հարցաշարերը և տոմսերը :

Ընթացիկ հարցեր

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը դասալսման վերաբերյալ:

Ս./թ. մայիսի 17-ին ներկա եղա լրագրություն բաժնի 3-րդ կուրսի Հեռուստառադիոլրագրողի վարպետություն առարկայի դասալսմանը, որը վարում էր ամբիոնի դասախոս հ.գ.թ., Դ.Մարկոսյանը: Օրվա թեման էր «Հասարակական-քաղաքական հաղորդումներ»: Դասը կառուցված էր «լսարանային բանավեճ-քննարկում» ձևաչափով: Ինձ գոհացրեց և՝ բազմափորձ լրագրող Դ.Մարկոսյանի դասի վարման մեթոդը, և՝ ուսանողների պատասխանները: Այդ պատասխանները մատուցվում էին

լրագրողին վայել կիրթ ու գրագետ հայերենով, սեղմ, բայց նաև պատկերավոր, հակառակ դեպքում արժանանում էին դասախոսի միջամտությանը, լրացմանը և ուղղմանը: Բարեբախտաբար դասախոսը միջամտելու և լրացնելու քիչ առիթներ ուներ, որն ուրախեցուցիչ է:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Դասալսման արդյունքները համարել բավարար:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

2023 թ. հունիսի 26-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

12. Պրոֆեսորադասախոսական կազմի վերջին հինգ տարիների ստեղծագործական, գիտամեթոդական աշխատանքերի քննարկում:
13. Սեմինոն քննությունների ամփոփում, զեկ. ամբիոնի վարիչ՝ դոցենտի պ. Լ. Գալստյան:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը պրոֆեսորադասախոսական կազմի վերջին հինգ տարիների ստեղծագործական, գիտամեթոդական աշխատանքերի քննարկում վերաբերյալ:

Խնդիր է դրվել հետազոտել արդի լրագրությանը նետված մարտահրավերների՝ սոցիալական ցանցերում այսպես կոչված «հանրային» կամ այսպես կոչված «ժողովրդական» լրագրության մրցակցային առանձնահատկությունները, կատարել վերլուծություն, առաջադրել դրանց դիմակայելու գործիքակազմի որոշման մեթոդներ:

Լույս են տեսել՝

1. Սերգո Երիցյանի գիրքը՝ նվիրված հանրահայտ լրագրող Վլադիմիր Պոզներին («Իմ սիրտը հայկական կողմում է / Կուզենայի հարցազրույց վերցնել Լեոնարդո Դա Վինչիից»)
2. Սերգո Երիցյանի և Մերի Թադևոսյանի հետ համատեղ ուսումնաօժանդակ ձեռնարկը՝ «Տեղեկատվական հոսքեր. լրագրությունից մինչև մուլտիմեդիա (ժամանակակից հաղորդակցության տեսության և պրակտիկայի հարցեր)»
3. Դիանա Մարկոսյանի ուսումնամեթոդական ձեռնարկը՝ «Արտակարգ իրավիճակներում աշխատող լրագրողի սոցիալ-հոգեբանական պատրաստվածության հիմնախնդիրները»:

Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ

Հեղինակ Ա.Ա.Հ.	Հոդվածի , զեկույցի անվանումը	Ծավալ
Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի, բ.գ.թ., դոցենտ	«ՏԵՐ բառույթի իմաստային կառուցվածքի զարգացումը հայերենում»	18 էջ
Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի, բ.գ.թ., դոցենտ	«Բառային նշանի, նշանակության և իմաստի փիլիսոփայական ըմբռնումները աշխարհի լեզվապատկերում»	9 էջ
Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի, բ.գ.թ., դոցենտ	«Սպարապետ» և «Հազարապետ» բառույթների իմաստային կառուցվածքի զարգացումը հայերենում	16 էջ
Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի, բ.գ.թ., դոցենտ	«Լեզվի և մտածողության հարաբերակցության հիմնախնդիրը բառիմաստի պատմական զարգացման տիրույթում»	16 էջ
Մարտիրոսյան Արտաշես Ռեդիկի, բ.գ.թ., դոցենտ	«Իրական անձինք, մարդիկ» բառաիմաստային խմբի մի քանի բառույթների բառարանագրական մշակումները հայերենում»	16 էջ
Մարկոսյան Դիանա Հովիկի հ.գ.թ.,	Հոգեբանական եվ մեթոդական պատրաստվածություն ունեցող ռազմական լրագրողների պատրաստման եվ վերապատրսատման հիմնախնդիրըՀՀ-ում:	26 էջ
Աբրահամյան Արամ Լևի ա.գ.թ.,	Դիտարկումներ հայկական պետության քաղաքական մշակույթի պատմական արմատների հարցի շուրջ (XX-XXI դդ.)	14 էջ
Аракелян А.А, Серегина А.А.,	"Странствие во снах"	10 էջ
Аракелян А.Р., Ходерян Д.Д.,	"Цифровая трансформация как реальность современного образования: нужно ли бороться с ветряными мельницами?"	12 էջ
Аракелян А. Р, Серегина А.А.,	Модернизация национальных образовательных систем в контексте глобализации культуры	10 էջ
Шакурова М. В., Пашкевич В. В., Аракелян А. Р., Тарлавский В. И.	ЦЕЛЕВЫЕ УСТАНОВКИ МОДЕЛИРОВАНИЯ ПРОФОРИЕНТАЦИОННОЙ РАБОТЫ В СИСТЕМЕ ОБРАЗОВАНИЯ РЕГИОНА	22 էջ
Վարդազարյան Գայանե Վլադիմիրի	Стихи русских поэтесс Звягинцевой и Петровых об Армении в переводе на армянский.	8 էջ

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Արդյունքները գնահատել բավարար:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը սեսիոն քննությունների ամփոփման վերաբերյալ:

Համաձայն ուսումնական պլանի և դեկնատի կողմից կազմված քննության գրաֆիկի Լրագրության բաժնի բոլոր ուսանողները քննության ժամանակ պարտադիր պետք է պատասխանեն տոմսերի հարցերին: Հարցաշարերը նախապես տեղադրվել են Classroom հրաթակում:Գալստյան գոհունակություն արտահայտեց քննությունների վերաբերյալ, նշեց որ մասնակցել է որոշ քննություներին և գոհ է արդյունքներից: Քննական գնահատականները հիմնվել են նաև ուսանողների հաճախումների, ակտիվության և ինքնուրույն աշխատանքների վրա:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Արդյունքները համարել բավարար:

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

2023 թ. հուլիսի 4-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հեռուստառադիոլրագրության ամբիոնի հերթական նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ամբիոնի տարեկան հաշվետվության և դասախոսների կատարած աշխատանքների վերաբերյալ, զեկ. ամբիոնի վարիչ՝ դոցենտի պ. Լ. Գալստյան:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ամբիոնի վարիչ, դոցենտի պ. Լ. Վ. Գալստյանի հաղորդումը ամբիոնի տարեկան հաշվետվությունը և դասախոսների կատարած աշխատանքների վերաբերյալ:

Հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծանրաբեռնվածությունը համապատասխանեցվել է այն իրողության հետ, որ 1-ին կուրսում ընդունելության նախատեսված 41 տեղի համար մրցույթում ընդունվել է 8 ուսանող: Ըստ այդմ, կատարվել են համապատասխան փոփոխությունների դասաբաշխման մեջ: Սակայն բովանդակային առումով հաշվետու տարում ուսումնական բոլոր աշխատանքները կատարվել են ծրագրված ծավալով: Ապահովվել են ուս. պլանով նախատեսված դասընթացները, թեմաներին առնչվող տեսանկարահանումներն ու մոնտաժային աշխատանքները, մասնագիտական պրակտիկան, դասընթացների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների օգտագործումն ու սպասարկումը: Մասնակիորեն են կատարվել միջազգային կրթական ծրագրերում ամբիոնի ուսանողների ներգրավման համար նախատեսված աշխատանքները. 4-րդ կուրսի ուսանողուհի Ժենյա Աբգարյանը մասնակցել է դեկտեմբերի 1-10-ը HUJ_ը SCI Germany-ի հետ համատեղ կազմակերպվող 10-օրյա «Երիտասարդ լրագրողները հանուն ժողովրդավարության» թրեյնինգ-սեմինարին:

Ուսանողները նախապես ծանոթացել են համալսարանի առցանց հարթակում առկա հաջորդ թեմային, գրականության ցանկին և դասախոսությանը: Լսարանում ինքը՝ ուսանողը, դասախոսի օգնությամբ, բացահայտել է թեմայի էական կողմերն ու հարակից հարցերը: Շարունակվել է կիրառվել դասախոս-ուսանող առցանց հաղորդակցման մեթոդը՝ որպես առաջադրանքների, օժանդակ նյութերի, ծագող հարց ու պատասխանների արդյունավետ հարթակ.

ինչը կարևոր չափելի գործիք է ուսուցման ելքային վերջնարդյունքների ճշգրիտ գնահատման համար: Մասնագիտական դասընթացներում նախորդ հաշվետու տարվա համեմատ ավելի մեծ տեղ է հատկացվել թեմայի ներկայացման թիմային ձևաչափով մուլտիմեդիոն գործիքակազմի օգտագործմանը, իսկ օրինակ, ոճաբանության և գրական խմբագրման դասավանդման մեջ լայնորեն կիրառվել է էլեկտրոնային գրատախտակով կամ հեռուստացույցի մոնիտորով աշխատանքի մեթոդը՝ որպես բոլորի համար տեսանելի և ուսանելի տեքստի ուղղման, խմբագրման և վերլուծության արդյունավետ եղանակ: Արդյունքում ուսանողը դարձել է սեփական լրագրողական նյութի և՛ հղացողը, և՛ խմբագիրը: Այս ամենը գործնականում նպաստել է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Կատարած ընթացիկ առաջադրանքների, գրավոր և բանավոր միջանկյալ ստուգումների և քննական աշխատանքների գնահատմանը դասախոսները մասամբ մասնակից են դարձրել նաև ուսանողներին՝ վստահելով նրանց կողմից սեփական աշխատանքը անաչառ գնահատելու բարոյական ունակությանը: Արդյունքները ճնշող մեծամասնությամբ գոհացուցիչ են եղել, չնայած երբեմն նկատելի են եղել նաև սուբյեկտիվ ինքնագնահատականներ: Ինչ վերաբերում է հաճախումների բաղադրիչին, դասախոսների սահմանած պահանջները լիովին արտացոլել են տվյալ դասընթացի համար անհրաժեշտ ֆիզիկական ներկայության, որոշ դեպքերում՝ առցանց շփման հանգամանքները: Վերացել են համացանցային նյութերի պատճենման փաստերը, դասախոսներն ընտրել են այնպիսի թեմաներ և այնպես են ձևակերպել կուրսային աշխատանքներն ու գրավոր առաջադրանքների թեմաները, որ բացառվել են կասկածելի աղբյուրներից օգտվելն ու եղած նյութերի մեքենայական կրկնությունները: Ակադեմիական ազնվության ապահովումը հաշվետու տարում շարունակել է լինել ամբիոնի գլխավոր ռազմավարական խնդիրներից մեկը:

Հաշվետու տարում հիմնական ուշադրությունը բևեռել է մանկավարժական տիրույթում մեդիագրագիտության տարրերի կամ որպես ամբողջական առարկայի դասավանդման ուսումնամեթոդական հարցերին, ինչպես նաև մուլտիմեդիոն լրագրության հիմնախնդիրներին: Այս մեթոդների կիրառման արդյունավետության բարձրացման համար նախորդ հաշվետու տարվա համեմատ ավելի մեծ տեղ է հատկացվել ուսանողների ստեղծագործական ինքնուրույնության խթանմանը՝ համապատասխանաբար վերանայելով և վերահաստատելով ուսումնամեթոդական առարկաների նկարագրերը:

Խնդիր է դրվել հետազոտել արդի լրագրությանը նետված մարտահրավերների՝ սոցիալական ցանցերում այսպես կոչված «հանրային» կամ այսպես կոչված «ժողովրդական» լրագրության մրցակցային առանձնահատկությունները, կատարել վերլուծություն, առաջադրել դրանց դիմակայելու գործիքակազմի որոշման մեթոդներ։

Շարունակվել է ուսումնամեթոդական և ճանաչողական համագործակցությունը ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանի հետ, ամբիոնի դասախոսները այցելել են հանրակրթական դպրոցներ։ Դպրոցներից եղել են հարցումներ հեռախոսազանգերի միջոցով։ Դպրոցներին առաջարկվել է ծանոթանալ ՀՊՄՀ-ի պաշտոնական կայքին, մասնավորապես՝ ընդունելության պահանջներին։

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Արդյունքները համարել բավարար։

Հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ, դոցենտի պ.՝ Լ. Վ. Գալստյան

Քարտուղար՝ Ս. Բ. Սերոբյան